ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 02/2023

ԳԱԳԻԿ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 25 հուլիսի, 2023 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի, Մարիամ Գալստյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Գագիկ Արմենակի Այվազյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2023 թվականի հունիսի 19-ին հարուցված թիվ 02/2023 վարույթի նյութերը.

պարզեց.

I. Նախապատմություն

Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Դատախազության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 26.1-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները, իրականացրել է դատախազների առաջխաղացման

ցուցակում ընդգրկվել հավակնող Գագիկ Արմենակի Այվազյանի վերաբերյալ բարեվարքության ուսումնասիրություն, որի արդյունքում արձանագրել է հետևյալը.

1. Գագիկ Այվազյանը 2014 թվականից սկսած զբաղեցրել է ստորև նշված պաշտոնները՝

- 2014 թվականի դեկտեմբերի 14-ից Քննչական Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի քննիչի,
- 2016 թվականի հուլիսի 6-ից Քննչական Կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի քննիչի, ապա՝ ավագ քննիչի, այնուհետև՝ բաժնի պետի տեղակալի,
- 2019 թվականի հուլիսի 4-ից Տավուշի մարզի դատախազության դատախազի, այնուհետև՝ Տավուշի մարզի դատախազության ավագ դատախազի,
- 2021 թվականի հունիսի 28-ից Տավուշի մարզի դատախազի տեղակալի,
- 2022 թվականի նոյեմբերի 11-ից մինչ օրս Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալի պաշտոնը:

2. Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ Գագիկ Այվազյանը **2011 թվականի մարտի 4-ից *մինչև 2023 թվականի մարտի 17-ը*** հանդիսացել է «ԿԱՐԱՆԳԱ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ , այսուհետ՝ նաև Ընկերություն) **100% բաժնեմասի սեփականատեր և գործադիր մարմնի ղեկավար**:

3. Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ 2023 թվականի մարտի 11-ին Գագիկ Այվազյանն Ընկերության կանոնադրական կապիտալի իր 100% բաժնեմասն օտարել է (նվիրատվության պայմանագրով) Հրաչուհի Հարությունյանին, ով մինչ օրս հանդիսանում է Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և գործադիր մարմնի ղեկավար:

4. Գագիկ Այվազյանի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 4-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի

արժեթղթերը և այլ ներդրումները՝ պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ» բաժնում տվյալ է ներկայացվել Ընկերության կանոնադրական կապիտալում **բաժնեմասնակցության** վերաբերյալ: Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասնակցության, գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու, ինչպես նաև իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տվյալներ ներկայացված չեն Գագիկ Այվազյանի 2017-2021 թվականների տարեկան հայտարարագրերի՝ պահանջվող համապատասխան բաժիններում:

5. 2023 թվականի հունիսի 19-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ 02/2023 որոշումը՝ Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Գագիկ Այվազյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:

6. 2023 թվականի հունիսի 21-ին թիվ Ե-01/1474-2023 գրությամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Գագիկ Այվազյանին՝ պահանջելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր: Նույն գրությամբ միաժամանակ Գագիկ Այվազյանը 2023 թվականի հուլիսի 12-ին հրավիրվել է Հանձնաժողով իր մասնակցությամբ վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ լսումների անցկացման նպատակով:

7. 2023 թվականի հուլիսի 3-ին Գագիկ Այվազյանի կողմից Հանձնաժողով ներկայացված թիվ Մ-2876-2023 գրությամբ ներկայացվել է պարզաբանում (այսուհետ՝ Պարզաբանում): Գրությանը կից ներկայացվել է նաև Պետական եկամուտների կոմիտեի 2023 թվականի հունիսի 27-ի թիվ 869 գրությունը՝ համաձայն որի՝ Ընկերությունը հարկային մարմնում հաշվառվել է 1995 թվականի օգոստոսի 3-ին և 2011 թվականի հունվարի 31-ից գտնվում է ժամանակավոր դադարեցված կարգավիճակում:

8. Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասը՝ 2023 թվականի հուլիսի 12-ին վարույթում քննարկվող փաստական հանգամանքների բազմակողմանիությունը, լրիվությունը և

օբյեկտիվությունն ապահովելու նպատակով Հանձնաժողովում Գագիկ Այվազյանի մասնակցությամբ իրականացվել են վարչական լսումներ:

9. 2023 թվականի հուլիսի 13-ին Հանձնաժողով ներկայացված թիվ Մ-3034-2023 գրությամբ Գագիկ Այվազյանը ներկայացրել է լրացուցիչ պարզաբանում:

10. Սույն վարույթի շրջանակներում անհամատեղելիության պահանջների պահպանման հնարավոր այլ խախտումներ ի հայտ բերելու, ինչպես նաև «Կարանգա» ՍՊ ընկերությանը պատկանող (վարձակալությամբ կամ անհատույց օգտագործվող) գույքի վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով ուսումնասիրվել են Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալները, ինչպես նաև 2023 թվականի հուլիսի 7-ին կատարվել են հարցումներ ՀՀ կադաստրի կոմիտեին և Ներքին գործերի նախարարության ոստիկանության ճանապարհային ոստիկանության ծառայությանը, որոնց ի պատասխան ներկայացվել է հետևյալ տեղեկատվությունը.

1)Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 7-ի թիվ 01/1595-2023 գրությանն ի պատասխան ՀՀ կադաստրի կոմիտեից 2023 թվականի հուլիսի 11-ի թիվ ՍԹ/9282-2023 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի, ինչպես նաև 2011 թվականի հունվարի 1-ից առ այսօր ընկած ժամանակահատվածում վարձակալության (անհատույց օգտագործման) գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ ՀՀ տարածքում կատարված չեն: Միաժամանակ հայտնել են նաև, որ Ընկերության անվամբ

շինություն հասցեի անշարժ

գույքի նկատմամբ 2005 թվականի ապրիլի 27-ին գրանցված է եղել սեփականության իրավունք (վկայական հիմք՝

սեփականաշնորհման պայմանագիր), որն անշարժ գույքի նվիրատվության 2023 թվականի մարտի 7-ի պայմանագրի հիման վրա օտարվել է և 2023 թվականի մարտի 13-ին սեփականության իրավունքով գրանցվել քաղաքացի Արմենակ Ժորայի Այվազյանի (անձնագիր՝) անվամբ: Կից ներկայացվել են վերոնշյալ փաստաթղթերի լուսապատճենները:

2) Հանձնաժողովի 2023 թվականի հուլիս 7-ի թիվ 01/1596-2023 գրությանն ի պատասխան Ներքին գործերի նախարարության ոստիկանության ճանապարհային ոստիկանության ծառայությունից 2023 թվականի հուլիսի 14-ի թիվ 14/17/85728-23 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության անվամբ գրանցված, հաշվառված և գրանցումից, հաշվառումից հանված տրանսպորտային միջոցներ առկա չեն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Գագիկ Այվազյանի կողմից 2023 թվականի հուլիսի 3-ին թիվ Մ-2876-2023 գրությամբ ներկայացվել է պարզաբանում՝ վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ, որով վերջինս հայտնել է, որ հոր՝ Արմենակ Այվազյանի կողմից 2011 թվականին՝ նախքան Ընկերության բաժնեմասն իրեն փոխանցելը, Պետական եկամուտների կոմիտե դիմում է ներկայացվել Ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու մասին, որի հիմքով էլ Ընկերության գործունեությունը համարվել է դադարեցված: Ընկերությունը դրանից հետո որևէ գործունեություն չի ծավալել և շրջանառություն չի ունեցել: Հայտնել է նաև, որ կարծել է, թե իրեն փոխանցվել է միայն Ընկերության գույքը, և Ընկերության տնօրեն հանդիսանալու փաստի վերաբերյալ տեղյակ չի եղել: Իսկ 2014 թվականին զինված ուժերից զորացրվելուց հետո առհասարակ մոռացել է և Բարեվարքության թերթիկի լրացման ժամանակ է միայն վերհիշել Ընկերության գոյության մասին: Ողջ ժամանակահատվածում Ընկերությանն առնչվող որևէ հարցով չի զբաղվել և ներգրավված չի եղել Ընկերության գործունեությանը:

2020 թվականի փետրվարին հորը՝ Արմենակ Այվազյանին առցանց լիազոր գրանցելու գործընթացի վերաբերյալ հայտնել է, որ նշված գործընթացում ինքը մասնակցություն չի ունեցել, այն իրականացվել է հոր կողմից:

Անդրադառնալով 2021, 2022 թվականներին հոր կողմից ՊԵԿ շրջանառության հարկ վճարող համարվելու, իսկ 2023 թվականին՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություններ ներկայացնելու փաստին, նշել է, որ կրկին տեղյակ չի եղել:

Նույնը վերահաստատել է նաև 2023 թվականի հուլիսի 12-ին Հանձնաժողովում իրականացված վարչական լսումների ընթացքում, նշելով, որ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող տարածքը զուտ փակ շինություն է, և այնտեղ որևէ գործունեություն չի իրականացվել: Միաժամանակ ավելացրել է, որ հոր խնդրանքով Պետական եկամուտների կոմիտե ներկայացված դիմումը ստորագրել է անձամբ, սակայն դիմումի բովանդակությանը չի ծանոթացել: Նշել է նաև, որ որևէ եկամուտ Ընկերությունից չի ստացել, իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս և ի պաշտոնե գործելիս ուշադրությունը որևէ ձևով չի շեղվել Ընկերությանն առնչվող որևէ գործընթացով: Ավելին, իր գործունեության վայրը չի հանդիսացել Չարենցավան քաղաքը: Իսկ անշարժ գույքի նվիրատվության գործարքով զուտ հորն է վերադարձրել վերջինիս նախկինում պատկանող շինությունը: Տնօրեն հանդիսանալու փաստին անդրադառնալով՝ նշել է, որ ընդհանուր առմամբ տեղյակ էր Ընկերությունում բաժնեմասնակցություն ունենալու և Ընկերությանը պատկանող գույքի վերաբերյալ, սակայն տնօրեն հանդիսանալու մասին տեղյակ չի եղել: Դրանից բացի, Ընկերությանում ունեցած բաժնեմասը չէր կարող հանձնել հավատարմագրային կառավարման, քանի որ, ըստ էության, չկար որևէ օբյեկտ, որը հնարավոր կլիներ կառավարել, երբ Ընկերությունը որպես այդպիսին չի եղել, այլ եղել է այնքանով, որ սեփականության իրավունքով Ընկերությանն է պատկանել չօգտագործվող անշարժ գույք և Ընկերությունը որպես այդպիսին գոյություն է ունեցել այդ գույքի առկայությամբ:

Գագիկ Այվազյանը նշել է նաև, որ թեև ձևականորեն թույլ է տվել անհամատեղելության պահանջի խախտում, սակայն բովանդակային առումով որևէ խախտում թույլ չի տվել, քանի որ Ընկերությունը որևէ գործունեություն չի իրականացրել, 2011 թվականից ի վեր բանկային հաշիվ չի ունեցել ու արդյունքում որևէ իրավահարաբերության վնաս չի պատճառվել:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

1. Գագիկ Այվազյանը 2014 թվականից սկսած զբաղեցրել է ստորև նշված պաշտոնները՝

- 2014 թվականի դեկտեմբերի 14-ից Քննչական Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի քննիչի,

- 2016 թվականի հուլիսի 6-ից Քննչական Կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի քննիչի, ապա՝ ավագ քննիչի, այնուհետև՝ բաժնի պետի տեղակալի,

- 2019 թվականի հուլիսի 4-ից Տավուշի մարզի դատախազության դատախազի, այնուհետև՝ Տավուշի մարզի դատախազության ավագ դատախազի,

- 2021 թվականի հունիսի 28-ից Տավուշի մարզի դատախազի տեղակալի,

- 2022 թվականի նոյեմբերի 11-ից մինչ օրս Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալի պաշտոնը:

2. Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ Գագիկ Այվազյանը **2011 թվականի մարտի 4-ից *մինչև 2023 թվականի մարտի 17-ը*** հանդիսացել է «ԿԱՐԱՆԳԱ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ , այսուհետ՝ Ընկերություն) **100% բաժնեմասի սեփականատեր և գործադիր մարմնի ղեկավար**:

3. Գագիկ Այվազյանի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 4-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի արժեթղթերը և այլ ներդրումները՝ պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ» բաժնում տվյալ է ներկայացվել Ընկերության կանոնադրական կապիտալում **բաժնեմասնակցության** վերաբերյալ: 2017-2021 թվականներին ներկայացված Հայտարարատու պաշտոնատար անձի տարեկան հայտարարագրերի պահանջվող համապատասխան բաժիններում Ընկերությունում **բաժնեմասնակցության, գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու**, ինչպես նաև իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տվյալներ ներկայացված չեն:

4. Հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 3-ի թիվ Ե-01/790-2023 գրությանն ի պատասխան Պետական եկամուտների կոմիտեի կողմից 2023 թվականի ապրիլի 5-ին

ներկայացված թիվ Ե-01/71-6/20163-2023 գրությամբ ստացած տեղեկատվության համաձայն՝ Գագիկ Այվազյանը՝ որպես Ընկերության տնօրեն, ***2020 թվականի փետրվարի 11-ին*** Պետական եկամուտների կոմիտե դիմում է ներկայացրել՝ Ընկերության հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում որպես առցանց լիազոր (համակարգչային ադմին) Արմենակ Այվազյանին գրանցելու վերաբերյալ:

5. 2021, 2022 թվականներին Ընկերության առցանց լիազորը (Գ. Այվազյանի հայրը՝ Արմենակ Այվազյանը) Պետական եկամուտների կոմիտե հայտարարություն է ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու, իսկ 2023 թվականին՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ:

6. Հանձնաժողովի 2023 թվականի մարտի 14-ի թիվ Ե-01/591-2023 գրությանն ի պատասխան Պետական եկամուտների կոմիտեի կողմից 2023 թվականի մարտի 17-ին ներկայացված թիվ Ե-01/71-6/15979-2023 գրությամբ ստացած տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը *2011 թվականի հունվարի 31-ից ունի ժամանակավոր դադարեցված կարգավիճակ,* 2017-2021 թվականների ընթացքում Ընկերությունն իրացման շրջանառություն, ինչպես նաև հարկվող շահույթ կամ վնաս չի ունեցել:

7. Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 7-ի թիվ 01/1595 գրությանն ի պատասխան ՀՀ կադաստրի պետական կոմիտեի կողմից 2023 թվականի հուլիսի 11-ի թիվ ՍԹ/9282-2023 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝ Գագիկ Այվազյանը, **կանոնադրության հիման վրա հանդես գալով Ընկերության անունից**, 2023 թվականի **մարտի 7-ին կնքված** Անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, քաղաք Չարենցավան, հասցեի 164.1 քմ մակերեսով անշարժ գույքը նվիրել է հորը Արմենակ Այվազյանին: Վերջինս հանդիսանում է Ընկերության հիմնադիրը (Ընկերությունը հիմնադրվել է 2005թ.-ին 1995 թվականին հիմնադրված «Ժորիկ Այվազյան և ընկերներ» ԼԸ անվանափոխված լիակատար ընկերակցության վերակազմավորման ճանապարհով):

8. Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ **2023 թվականի մարտի 11-ին** Գագիկ

Այվազյանն Ընկերության կանոնադրական կապիտալի իր 100% բաժնեմասն օտարել է (նվիրատվության պայմանագրով) Հրաչուհի Հարությունյանին, ով մինչ օրս հանդիսանում է Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և գործադիր մարմնի ղեկավար:

9. Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածում Գագիկ Այվազյանի կողմից, որպես Ընկերության տնօրեն, կառավարչական (ներկայացուցչական) գործառույթներ իրականացված լինելու վերաբերյալ որևէ տվյալ առկա չէ:

IV. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող ներպետական օրենսդրական կարգավորումներ

1. «Դատախազության մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատախազը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, ***որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում***, ***զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ***, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից»:

2. ***«Հանրային ծառայության մասին» օրենքի*** 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***հանրային պաշտոնը*** դասակարգվում է խմբերի՝ **պետական** և համայնքային: Նույն հոդվածի համաձայն՝ պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ***ինքնավար*** և հայեցողական:

3. Նշված օրենքի 7-րդ հոդվածում սահմանված ***ինքնավար պաշտոնների*** շրջանակում ներառված է նաև դատախազի պաշտոնը:

4. Նշված օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **հանրային պաշտոն** զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում ***նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝*** **մեկ ամսվա ընթացքում,** պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

5. Նույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանվում են առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասկացությունները:

6. «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով առևտրային կազմակերպությունում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝

1) առևտրային կազմակերպության **կառավարման մարմնում ընդգրկված լինելը**.

2) առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը.

3) առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.

4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, **որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը**: (...)

7. Նույն օրենքի իմաստով **ձեռնարկատիրական գործունեություն է** համարվում՝

(...) առևտրային կազմակերպության **մասնակից լինելը**, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:

8. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 5-րդ գլխով կարգավորված են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կառավարման հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, նույն օրենքի 43-րդ հոդվածով սահմանված են գործադիր մարմնի լիազորությունները, որոնց թվում ներառված են նաև ընկերության անունից հանդես գալու և գործարքներ կնքելու, ինչպես նաև ընկերության շահերը ներկայացնելու լիազորությունները:

9. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլ դեպքերի, Հանձնաժողովը կարող է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի

կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ հարուցել **Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ հայտարարագրերը վերլուծելիս առերևույթ խախտումներ կամ դեպքեր հայտնաբերելու դեպքում:**

10. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

V. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

1. Դատախազի հանրային պաշտոնը զբաղեցնող անձանց համար ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաև առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու սահմանափակումն ամրագրված է ինչպես «Դատախազության մասին», այնպես էլ «Հանրային ծառայության մասին» օրենքներով:

2. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը, մասնավորապես, չի արգելում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց որպես սեփականություն ունենալ բաժնեմաս առևտրային կազմակերպությունում, բացառությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի (2023 թվականի հունվարի 2-ին ուժի մեջ մտած ՀՕ 540-Ն օրենք) 31-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքերի, որով մասնավորապես սահմանվում է, որ

- հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերելու առևտրային

կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ):

- առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու կամ պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնն ստանձնելուց կամ ժառանգությունն ընդունելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:

Նշված իրավադրույթներից հետևում է, որ օրենսդիրը չի սահմանափակում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց սեփականության իրավունքով արդեն իսկ իրենց պատկանող գույքը տնօրինելու իրավունքից, այլ տվյալ պաշտոնը զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված՝ նախատեսում է օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն համարվող առևտրային կազմակերպությունում ունեցած բաժնեմասնակցության տնօրինման կոնկրետ եղանակ, այն է, պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն (բաժնետոմս, փայ) ***ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման***՝ դրանով իսկ բացառելով կամ նվազագույնի հասցնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մոտ շահերի բախման իրավիճակները: Նման կարգավորումները որևէ կերպ չեն խաթարում անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված, սեփականության հիմնարար իրավունքը, քանի որ անձը, հանձնելով առևտրային կազմակերպությունում իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման, չի փոխանցում իր սեփականության իրավունքը հավատարմագրային կառավարչին, այլ այդ կերպ իրացնում է իր՝ սեփականատիրոջ իրավունքը:

Իրավական սահմանափակումների ներքո ենթադրվում է, որ պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավորվում է գործունեություն իրականացնել իր պաշտոնի նկատմամբ սահմանված իրավական որոշակի սահմանափակումների շրջանակներում: Հետևաբար, նշանակվելով հանրային պաշտոնում՝ իրավունքների ու պարտականությունների հետ մեկտեղ պաշտոնատար

անձը ստանձնում է նաև օրենքով սպառիչ կերպով սահմանված սահմանափակումների ներքո գործելու պարտականություն, որը հետապնդում է տվյալ պարագայում դատախազի կողմից բացառապես իր պաշտոնեական լիազորությունների և գործառույթների իրականացումն ապահովելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց մուտքը դատախազության համակարգ բացառելու օրինաչափ նպատակը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված անհամատեղելիության պահանջների **նպատակը շահերի բախման հնարավոր իրավիճակների բացառումն է, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից իրենց աշխատաժամանակի, որպես հանրային ռեսուրսի, պատշաճ տնօրինման ապահովումն է:**

3. Տվյալ պարագայում, Գագիկ Այվազյանը 2014 թվականից հանդիսանում է պետական ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ (2019 թվականի հուլիսի 4-ից Տավուշի մարզի դատախազության դատախազ), և նրա գործունեության նկատմամբ տարածվում են «Դատախազության մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի և «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի կարգավորումները: Այսինքն, Գագիկ Այվազյանը պարտավոր էր պաշտոնը ստանձնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Ընկերության՝ իրեն պատկանող բաժնեմասը, օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը դադարեցնելու ուղղությամբ:

Սույն վարույթում քննարկվող փաստական հանգամանքները հաշվի առնելով, Հանձնաժողովը հարկ է համարում վերոնշյալ փաստերը և դրանց վերաբերելի իրավակարգավորումները վերլուծել օրենքի **ձևական և բովանդակային տեսանկյունից:**

4. Սույն վարույթի շրջանակներում Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի ձևական տեսանկյունից խախտվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ տարածվող անհամատեղելիության պահանջները, և դա դրսևորվել է Գագիկ Այվազյանի կողմից պաշտոն ստանձնելուց հետո Ընկերության՝ իր բաժնեմասն օրենքով սահմանված կարգով և ժամկետում հավատարմագրային կառավարման չհանձնելու,

ինչպես նաև առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված Ընկերության անունից ներկայացուցչական բնույթի գործողություններ կատարելու արարքներով: Նշվածի համատեքստում, ելնելով պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաև առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու օրենսդրական արգելքի վերաբերյալ դրույթների բովանդակային նշանակությունից ակնհայտ է դառնում, որ էական է արարքում երկու հատկանիշների առկայությունը՝ անձի կողմից իր բաժնեմասնակցության փաստի ուժով փաստացի ձեռնարկատիրական գործունեության, ներառյալ՝ համապատասխան գործողությունների կատարմամբ բուն տնտեսական գործունեության իրականացումը և դրա արդյունքում ստացված շահույթի կամ կրած վնասի առկայությունը, իսկ զբաղեցրած պաշտոնի առնչությամբ՝ փաստացի կատարված ներկայացուցչական գործողությունների կատարումն ու եկամտի ստացումը: Հանձնաժողովը հարկ է համարում Գագիկ Այվազյանի կողմից կատարված առերևույթ խախտմանն անդրադառնալ «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու արգելքի բովանդակային տեսանկյունից, ուստի նշված արարքը անհրաժեշտ է համարում դիտարկել դրա բովանդակային դրսևորումների շրջանակում՝ գնահատելով սույն գործով ձեռք բերված ապացույցները:

5. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով: Նշված իրավանորմով պայմանավորված՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ իր կողմից նախկինում կայացված որոշումներին, մասնավորապես՝ 2023 թվականի փետրվարի 20-ի թիվ 05/2023 եզրակացությամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու խախտմանն առնչվող գործով արձանագրել է անհամատեղելիության պահանջների խախտման բացակայություն՝ որպես պատճառաբանություն նշելով, որ թեև առևտրային կազմակերպության գործունեության դադարեցման և կամ ժամանակավոր դադարեցման վերաբերյալ տվյալներ առկա չեն,

այնուամենայնիվ (ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն) նշված ընկերության՝ վերաբերելի ժամանակահատվածի ընթացքում փաստացի գործունեություն իրականացնելու, իրացման շրջանառության, ինչպես նաև շահույթի ստացման վերաբերյալ տվյալներ առկա չեն եղել: Թեև օրենքի ձևական առումով առկա է եղել խախտում, սակայն անձի հնարավոր ազդեցությունն այդ կազմակերպության գործունեության նկատմամբ բացառվում էր, քանի որ վերջինս փաստացի գործունեություն չէր իրականացրել:

Հանձնաժողովի կողմից նշված եզրակացությամբ հաստատված փաստական համապատասխան հանգամանքների և սույն գործով առկա հանգամանքների միջև առևտրային կազմակերպությունում բաժնեմասնակության ուժով օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվելու արգելքի մասով էական տարբերություն առկա չէ, մինչդեռ տվյալ դեպքում առևտրային կազմակերպությունում բաժնեմասնակությանը զուգահեռ առկա է նաև առևտրային կազմակերպությունում **պաշտոն զբաղեցնելու առերևույթ հատկանիշը**:

6. Սույն գործով ձեռք բերված փաստական տվյալ է այն, որ Ընկերության գործունեությունը 2011 թվականի հունվարի 31-ից ժամանակավոր դադարեցված է և Ընկերությունը 2017-2022 թվականների ընթացքում իրացման շրջանառություն, ինչպես նաև հարկվող շահույթ չի ունեցել, Գագիկ Այվազյանը տվյալ ընկերությունից որևէ եկամուտ չի ստացել (ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվություն): Մեկ այլ փաստական տվյալ է այն, որ Գագիկ Այվազյանի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 4-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի արժեթղթերը և այլ ներդրումները՝ պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ» բաժնում տվյալ է ներկայացվել Ընկերության կանոնադրական կապիտալում **բաժնեմասնակցության** վերաբերյալ:

Առևտրային կազմակերպությունում **պաշտոն զբաղեցնելու առերևույթ հատկանիշի կապակցությամբ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ** սույն վարույթի շրջանակներում ձեռք բերված այնպիսի փաստական

տվյալների, որոնց համաձայն՝ Գագիկ Այվազյանի կողմից իրականացվել են ներկայացուցչական բնույթի գործողություններ, մասնավորապես՝ 2020 թվականին դիմում է ներկայացվել Պետական եկամուտների կոմիտե իր հորը՝ Արմենակ Այվազյանին, առցանց լիազոր նշանակելու վերաբերյալ, որպեսզի հնարավոր հաշվետվողական փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում վերջինս ներկայացնի դրանք, ինչպես նաև 2023 թվականին կնքվել է Ընկերության սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որով վարույթի մասնակիցը անհատույց հորն է փոխանցել Ընկերությանը պատկանող անշարժ գույքը: Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների շրջանակում էական է այն, որ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ Գագիկ Այվազյանն իր բաժնեմասնակցության փաստով պայմանավորված նշված ժամանակահատվածում որևէ փաստացի մասնակցություն չի ունեցել Ընկերության կառավարման գործառույթների իրականացմանը:

Սույն գործի շրջանակներում առկա չէ որևէ փաստական հանգամանք, որով հաստատված կհամարվեր Գագիկ Այվազյանի կողմից Ընկերության գործունեությունից եկամուտ ստանալու հանգամանքը, ինչպես նաև բաժնեմասնակցության և տնօրեն հանդիսանալու հանգամանքների՝ որևէ ձևով վերջինիս ի պաշտոնե մասնագիտական գործառույթների իրականացմանը խոչընդոտ հանդիսանալու առումով: Տվյալ պարագայում, վարույթի ընթացքում ձեռք բերված տվյալների համաձայն՝ իրականացվել է անշարժ գույքի նվիրատվության գործարքի և էական է այն, որ իրականացվել է անհատույց հիմունքներով գործարք, որի կողմը, ըստ էության, հանդիսացել է հենց Ընկերության հիմնադիրը՝ Գագիկ Այվազյանի հայրը, ով դեռևս 1995 թվականին հիմնադրել է Ընկերությունը: Ըստ էության, նշված գործարքով Ընկերության գույքը փոխանցվել է Ընկերության կանոնադրական կապիտալի նախկին սեփականատիրոջը՝ Գագիկ Այվազյանի հորը:

Անդրադառնալով Գագիկ Այվազյանի կողմից իրականացված մեկ այլ ներկայացուցչական բնույթի գործողությանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Պետական եկամուտների կոմիտե դիմումի ներկայացումը ուղղված է եղել այլ անձի՝

տվյալ պարագայում Ընկերության հիմնադրին՝ առցանց լիազոր նշանակելուն, ով իրականացրել է Ընկերության անունից Պետական եկամուտների կոմիտեի հետ կապված գործողություններ, արդյունքում Գագիկ Այվազյանը փաստացի մասնակցություն չի ունեցել Ընկերության հաշվետվողականությանը: Հանձնաժողովը գտնում է, որ այս առումով ևս Գագիկ Այվազյանի կողմից դատախազի պաշտոնի հետ անհամատեղելի գործողություններ բովանդակային առումով չեն իրականացվել:

Գործում առկա փաստական տվյալների համաձայն՝ Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ 2023 թվականի մարտի 11-ին Գագիկ Այվազյանն Ընկերության կանոնադրական կապիտալի իր 100% բաժնեմասն օտարել է (նվիրատվության պայմանագրով) Հրաչուհի Հարությունյանին, ով մինչ օրս հանդիսանում է Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և գործադիր մարմնի ղեկավար:

Նշվածից մասնավորապես հետևում է, որ Գագիկ Այվազյանի կողմից իրականացված գործողությունները առավելապես հանդիսացել են սեփականության իրավունքի իրացմանն ուղղված գործողություններ: Նշվածից բացի, վերջինս իր կողմից ներկայացված պարզաբանմամբ դիրքորոշում է հայտնել առ այն, որ Ընկերությունը ընկալել և դիտարկել է որպես զուտ սեփականություն՝ բաժնեմասնակցություն առևտրային կազմակերպությունում, որը որևէ փաստացի գործունեություն չի իրականացնում: Հանձնաժողովն արձանագրում է, որ ի հավաստումն վերոնշյալի Ընկերությունում բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալ ներկայացված է եղել դեռևս 2017 թվականի սեպտեմբերի 4-ին վարույթի մասնակցի կողմից ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրի համապատասխան բաժնում: Բարեվարքության թերթիկի լրացման ժամանակ վերհիշելով Ընկերությունում բաժնեմասնակցության, ինչպես նաև զբաղեցրած պաշտոնի առնչությամբ առկա օրենսդրությամբ սահմանված սահմանափակումների և դրանց չպահպանման անբարենպաստ հետևանքների մասին՝ վերջինս համապատասխան միջոցներ է ձեռնարկել իր բաժնեմասի և Ընկերությանը պատկանող գույքի օտարման ուղղությամբ:

Վերոնշյալ գործողություններն իրականացվել են սեփականության իրավունքի իրացման, այլ ոչ թե գործադիր մարմնի ղեկավարի կարգավիճակից բխող գործողությունների համատեքստում: Վարույթի մասնակիցը ձեռնարկատիրական գործունեությանն ուղղված որևէ գործողություն փաստացի չի ձեռնարկել, այլ իրականացրել է անհրաժեշտ ողջամիտ քայլերը բաժնեմասի օտարումից առաջ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի նախկին սեփականատիրոջը վերադարձնելու ուղղությամբ:

Հանձնաժողովը վարույթի համար էական է համարում այն հանգամանքը, որ դեռևս դատախազի պաշտոնը ստանձնելուց առաջ և պաշտոնի ստանձնումից հետո Գագիկ Այվազյանը Ընկերությունում իր բաժնեմասը գործող օրենսդրական իրավակարգավորումներին համապատասխան հավատարմագրային կառավարման չհանձնելու պարագայում փաստացի ձեռնարկատիրական գործունեություն, ըստ էության, չի իրականացրել և շահույթ չի ստացել, ինչպես նաև այն հանգամանքը, որ առևտրային կազմակերպությանը ձևական առումով մասնակից լինելուն զուգահեռ պաշտոնատար անձի կողմից փաստացի չի պահպանվել նաև իր ազդեցությունն առևտրային կազմակերպության գործունեության նկատմամբ, ինչպես նաև որևէ ձևով ներգրավված չի եղել Ընկերության կառավարման գործառույթների իրականացմանը, քանի որ Ընկերությունը, ըստ էության, շահույթ հետապնդող առևտրային գործունեություն չի իրականացրել: Հետևաբար, Գագիկ Այվազյանի կողմից իր ստանձնած պաշտոնի հետ անհամատեղելի գործունեություն փաստացի չի իրականացվել:

Արդյունքում, սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովը ***եզրահանգում է,*** որ *սույն գործով քննարկված փաստական հանգամանքների շրջանակներում* Գագիկ Այվազյանն իր գործողություններով բովանդակային առումով չի խախտել «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, 4 կողմ (Հայկուհի Հարությունյան, Արամայիս Փաշինյան, Նարեկ Համբարձումյան, Լիլիթ Ալեքսանյան) և մեկ դեմ (Մարիամ Գալստյան) ձայների հարաբերակցությամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Գագիկ Արմենակի Այվազյանի կողմից չեն խախտվել հանրային պաշտոնին օրենսդրությամբ ներկայացվող անհամատեղելիության բովանդակային պահանջները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Թեև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով ուղղակիորեն ամրագրված չէ հատուկ կարծիք ներկայացնելու հնարավորությունը, այդուհանդերձ, հաշվի առնելով Հանձնաժողովի իրավակիրառ պրակտիկան[1] ստորև ներկայացնում եմ իմ դիտարկումները Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Գագիկ Արմենակի Այվազյանի կողմից հանրային պաշտոնին օրենսդրությամբ ներկայացվող անհամատեղելիության պահանջների խախտում կատարելու վերաբերյալ.

Հանձնաժողովը Որոշման շրջանակներում վարույթի համար էական է համարել այն հանգամանքը, որ դեռևս **դատախազի պաշտոնը ստանձնելուց առաջ և պաշտոնի ստանձնումից հետո** Գագիկ Այվազյանն Ընկերությունում իր բաժնեմասը գործող օրենսդրական իրավակարգավորումներին համապատասխան հավատարմագրային կառավարման չհանձնելու պարագայում **փաստացի ձեռնարկատիրական գործունեություն**, ըստ էության, **չի իրականացրել և շահույթ չի ստացել**, ինչպես նաև այն հանգամանքը, որ առևտրային կազմակերպությանը **ձևական առումով մասնակից լինելուն զուգահեռ** պաշտոնատար անձի կողմից փաստացի չի պահպանվել նաև իր ազդեցությունն առևտրային կազմակերպության գործունեության նկատմամբ, ինչպես նաև **որևէ ձևով ներգրավված չի եղել Ընկերության կառավարման գործառույթների իրականացմանը, քանի որ Ընկերությունը**, ըստ էության, **շահույթ հետապնդող ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացրել:**

Արդյունքում, սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովը ***եզրահանգում է,*** որ *սույն գործով քննարկված փաստական*

[1] Տե՛ս Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 20-ի «ԳԱԳԻԿ ԿՈԼՅԱՅԻ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» թիվ 03/2020 եզրակացությունը:

հանգամանքների շրջանակներում **Գագիկ Այվազյանն իր գործողություններով բովանդակային առումով չի խախտել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները**:

Ամբողջությամբ համաձայնելով Հանձնաժողովի այն դիրքորոշման հետ, որ նախկինում Հանձնաժողովը պաշտոնատար անձի կողմից **ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը** մշտապես մեկնաբանել է նորմի բովանդակային տեսանկյունից և այն բոլոր դեպքերում, երբ անձը պաշտոնը ստանձնելուց հետո օրենքով սահմանված կարգով իր բաժնեմասնակցությունը չի հանձնել հավատարմագրային կառավարման, սակայն պետական մարմիններից ստացված տվյալներով հաստատվել է, որ նշված կազմակերպությունը փաստացի գործունեություն չի ծավալել և շահույթ չի ստացել, Հանձնաժողովը անձի կողմից իր բաժնեմասնակցությունը հավատարմագրային կառավարման չհանձնելու հանգամանքը չի դիտարկել որպես անհամատեղելիության պահանջի խախտում: Նշվածի համատեքստում ես ևս կարծում եմ, որ ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվելու պահանջի բովանդակային խախտում Գագիկ Այվազյանի կողմից թույլ չի տրվել, և նշված եզրահանգումը համապատասխանում է Հանձնաժողովի կողմից տարբեր վարույթների շրջանակներում դրսևորված մոտեցմանը:

Ինչ վերաբերում է առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու պահանջի խախտման հանգամանքին՝ հարկ է նշել, որ Հանձնաժողովի կողմից Որոշման շրջանակներում չեն վերլուծվել և, ըստ էության, անտեսվել են Գագիկ Այվազյանի կողմից ներկայացված պարզաբանումների և փաստական տվյալների միջև առկա էական հակասությունները, որոնք, իմ կարծիքով, որոշիչ դեր ունեն խախտման առկայության կամ բացակայության որոշման հարցում:

Վարույթի շրջանակներում քննարկվող հարցերի առնչությամբ Գագիկ Այվազյանը Պարզաբանմամբ հայտնել է, որ

1. Հոր՝ Արմենակ Այվազյանի կողմից 2011 թվականին՝ նախքան Ընկերության բաժնեմասն իրեն փոխանցելը, ՊԵԿ դիմում է ներկայացվել Ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու մասին, որի հիմքով էլ Ընկերության գործունեությունը

համարվել է դադարեցված: Ընկերությունը դրանից հետո որևէ գործունեություն չի ծավալել և շրջանառություն չի ունեցել: Հայտնել է նաև, որ կարծել է թե իրեն փոխանցվում է միայն Ընկերության գույքը, և **Ընկերության տնօրեն հանդիսանալու փաստի վերաբերյալ տեղյակ չի եղել:** Մինչդեռ, Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ **Գագիկ Այվազյանը 2011 թվականի մարտի 4-ից մինչև 2023 թվականի մարտի 17-ը հանդիսացել է Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և գործադիր մարմնի ղեկավար**:

2. 2014 թվականին զինված ուժերից զորացրվելուց հետո՝ **մոռացել է և Բարեվարքության թերթիկի լրացման ժամանակ է միայն վերհիշել Ընկերության գոյության մասին**: Մինչդեռ, Ընկերության կանոնադրական կապիտալում **բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալ ներկայացվել է Գագիկ Այվազյանի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 4-ին ներկայացված** «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» **հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի արժեթղթերը և այլ ներդրումները՝ պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ» բաժնում**:

3. Ողջ ժամանակահատվածում Ընկերությանն առնչվող **որևէ հարցով չի զբաղվել և ներգրավված չի եղել Ընկերության գործունեությանը**: Մինչդեռ, Պետական եկամուտների կոմիտեի կողմից 2023 թվականի ապրիլի 5-ին ներկայացված թիվ Ե-01/71-6/20163-2023 գրությամբ ստացած տեղեկատվության համաձայն՝ **Գագիկ Այվազյանը՝ որպես Ընկերության տնօրեն, 2020 թվականի փետրվարի 11-ին Պետական եկամուտների կոմիտե դիմում է ներկայացրել՝ Ընկերության հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում որպես առցանց լիազոր (համակարգչային ադմին) Արմենակ Այվազյանին գրանցելու վերաբերյալ**:

4. **2020 թվականի փետրվարին հորը՝ Արմենակ Այվազյանին առցանց լիազոր գրանցելու գործընթացի վերաբերյալ հայտնել է, որ նշված գործընթացում ինքը մասնակցություն չի ունեցել, այն պին կոդի միջոցով էլեկտրոնային եղանակով հայրն է փոխել,** որ հնարավոր որևէ հաշվետվական գործողություն կատարելու անհրաժեշտության կամ որևէ դիմում ու հայտարարություն տալու անհրաժեշտության դեպքում անձամբ

կատարի: Մինչդեռ, Պետական եկամուտների կոմիտեի կողմից 2023 թվականի ապրիլի 5-ին ներկայացված թիվ Ե-01/71-6/20163-2023 գրությամբ կից ներկայացվել է նաև **Գագիկ Այվազյանի 2020 թվականի փետրվարի 11-ի թիվ 999 դիմումի բնօրինակի լուսապատճենը**, որը **ստորագրված է Գագիկ Այվազյանի կողմից, ով հանդես է եկել որպես Ընկերության տնօրեն (ստորագրությունն առերևույթ էլեկտրոնային չէ**, և առկա են Ընկերության, ինչպես նաև ՊԵԿ-ի համապատասխան վարչության սպասարկման բաժնի կնիքները):

5. **Անդրադառնալով 2021, 2022 թվականներին իր տրամադրած լիազորագրի հիման վրա հոր կողմից ՊԵԿ** շրջանառության հարկ վճարող համարվելու, իսկ 2023 թվականին՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ **հայտարարություններ ներկայացնելու փաստին, նշել է, որ կրկին տեղյակ չի եղել**, և հայրը նշված հայտարարությունները ներկայացրել է՝ մտածելով, որ հնարավոր է տարվա ընթացքում որևէ գործունեությամբ զբաղվի՝ կարծելով, որ նշված հայտարարությունները պետք է տրվեն միայն տարվա սկզբում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունն այդպես էլ ձեռնարկատիրական գործունեությամբ չի զբաղվել, և որևէ եկամուտ չի ստացել, բաժնեմասի սեփականության իրավունքի և տնօրենի փոփոխության ուղղությամբ որևէ գործողություն չի ձեռնարկվել: **Վերոնշյալի կապակցությամբ մի դեպքում վարույթի մասնակիցը նշում է, որ առհասարակ մոռացել է Ընկերությունում բաժնեմասնակցություն ունենալու և պաշտոն զբաղեցնելու փաստի գոյության մասին, մեկ այլ դեպքում՝ նշում, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունն այդպես էլ ձեռնարկատիրական գործունեությամբ չի զբաղվել և որևէ եկամուտ չի ստացել, բաժնեմասի սեփականության իրավունքի և տնօրենի փոփոխության ուղղությամբ որևէ գործողություն չի ձեռնարկվել**:

Մինչդեռ, Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ **2023 թվականի մարտի 11-ին Գագիկ Այվազյանն Ընկերության կանոնադրական կապիտալի իր 100% բաժնեմասն օտարել է (նվիրատվության պայմանագրով) Հ. Հ.-ին**: Մեկ այլ՝ **ՀՀ կադաստրի պետական կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Գագիկ Այվազյանը, հանդես գալով Ընկերության անունից, 2023 թվականի մարտի 7-ին կնքված անշարժ**

գույքի նվիրատվության պայմանագրով Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող քաղաք Չարենցավան, հասցեում գտնվող մակերեսով **անշարժ գույքը նվիրել է Արմենակ Այվազյանին**:

6. Վարչական լսումների ընթացքում Գագիկ Այվազյանը, ի հավելումն վերոնշյալի, իր բարեվարքության ուսումնասիրության գործընթացին նախորդող ժամանակահատվածում միայն առերևույթ անհամատեղելիության խախտումները վերացնելուն ուղղված քայլերի իրականացմանը ձեռնամուխ լինելու առնչությամբ նշել է, որ նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ ինքը միայն այդ փուլում է մտաբերել մասնակցության և ՍՊԸ տնօրեն հանդիսանալու մասին: Մինչդեռ, ի պատասխան Հանձնաժողովի հարցադրման առ այն, թե ինչու չի քայլեր ձեռնարկել դեռևս այն ժամանակահատվածում, երբ ինքը նշված բաժնեմասնակցությունը ներկայացրել էր իր 2017 թվականի հայտարարագրում՝ **Գ.Այվազյանը նշել է, որ ըստ էության տարբերություն չկա, թե որ ժամանակահատվածում կվերացներ նշված խնդիրը, քանի որ նշված ժամանակահատվածում ևս արձանագրվելու էին իր կողմից կատարված գործողությունները**:

Վերը նշված տվյալների համադրության արդյունքում հարկ եմ համարում անդրադառնալ այն հարցին, թե Գագիկ Այվազյանի կողմից առևտրային կազմակերպությունում տնօրենի պաշտոն զբաղեցնելը և դրանից բխող գործողությունները կատարելը կրել է արդյոք ձևական բնույթ, թե ոչ:

Գագիկ Այվազյանը դատախազի պաշտոնն ստանձնել է 2019 թվականի հուլիսի 4-ին, մինչ այդ 2014 թվականից զբաղեցրել է Քննչական կոմիտեում զբաղեցրել է քննիչի, ավագ քննիչի բաժնի պետի տեղակալի պաշտոններ:

Ուստի, անհրաժեշտ է վերլուծել վերաբերելի օրենսդրությունը.

1.«Քննչական կոմիտեի մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի (մինչև 09.12.20 ՀՕ-494-Ն օրենքի ընդունումը՝ Քննչական կոմիտեի ծառայողի) նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:

2. «Հանրային ծառայության մասին» օրենքի 26.05.2011 թվականին ընդունված ՀՕ-172-Ն «Հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի այլ գործունեության սահմանափակումները» վերտառությամբ 24-րդ հոդվածը սահմանում էր հետևյալը.

«1. Հանրային ծառայողը և բարձրաստիճան պաշտոնատար անձը **չեն կարող անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ**, կատարել այլ վճարովի աշխատանք, (...):

2. Սույն օրենքի իմաստով **ձեռնարկատիրական գործունեություն** է համարվում՝

1) անհատ ձեռնարկատեր լինելը.

2) **առևտրային կազմակերպության մասնակից լինելը**, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման.

3) **առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելը**, առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը կամ որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:»:

Նշված իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորման պահը Օրենսդիրը պաշտոնատար անձի կողմից առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելը դիտարկել է ձեռնարկատիրական գործունեության համատեքստում:

Միաժամանակ, «Դատախազության մասին» 17.11.2017 թվականի ՀՕ-198-Ն օրենքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, **որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում**, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

«Հանրային ծառայության մասին» 23.03.2018 թվականի ՀՕ-206-Ն օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, **որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում**, **զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ,** կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Համայնքի ավագանու անդամների այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումները նկարագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում:

(...)

5. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

6. Սույն օրենքի իմաստով՝ առևտրային կազմակերպությունում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝

1) **առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելը.**

2) առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը.

3) առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.

4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

(...)

7. Սույն օրենքի իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված գործունեությունն իրականացնելը,

2) անհատ ձեռնարկատեր լինելը,

3) առևտրային կազմակերպության մասնակից, բաժնետեր, փայատեր լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության բաժնեմասը, բաժնետոմսը, փայն ամբողջությամբ հանձնվել են հավատարմագրային կառավարման, կամ չի գերազանցում սույն հոդվածի 8-րդ մասի 11-րդ կետում նշված թույլատրելի բաժնեմասնակցությունը: (...)»:

Նշված դրույթների վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները լրամշակելիս հստակ տարանջատել է «ձեռնարկատիրական գործունեություն» և «առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնել» եզրույթները: Ավելին, օրենսդիրը սահմանել է նաև երրորդ պայման՝ այլ վճարովի աշխատանք կատարելու արգելք, ինչից բխում է, որ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելն ինքնին չի ենթադրում ձեռնարկատիրական գործունեության իրականացում և չի ենթադրում նաև վարձատրություն ստանալու պարտադիր պայման:

Հայաստանի Հանրապետության 2005 թվականի Սահմանադրության մեկնաբանություններում[2], անդրադարձ կատարելով Սահմանադրությամբ ամրագրված՝ կառավարության անդամին վերաբերելի նույնաբովանդակ նորմին, նշվում է հետևյալը.

«Սահմանադրության նշված սահմանափակումից ենթադրվում է, որ կառավարության անդամի պաշտոնը **նրա աշխատանքային գործունեության միակ տեսակն է, աշխատում է պրոֆեսիոնալ հիմունքներով և դրան զուգահեռ նա չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված այլ պաշտոն**: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում իր պարտականությունների հետ չկապված պաշտոն զբաղեցնելու՝ կառավարության անդամի նկատմամբ նախատեսված արգելքը բխում է իշխանությունների բաժանման սկզբունքից և սահմանադրական այն դրույթից, որի համաձայն նշված մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով (5-րդ հոդված), ինչպես նաև մեկնաբանվող հոդվածի բովանդակությունից, ըստ որի կառավարության անդամը չի կարող կատարել այլ վճարովի աշխատանք:

[2] «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ», 865-871

«Պաշտոն» հասկացությունը մասնագետների կարծիքով նշանակում է անձի համար իրավաբանորեն սահմանված գործառույթների ու իրավասությունների այն ծավալը, որի շրջանակներում նա պետք է մասնակցի համապատասխան մարմնի լիազորությունների իրականացմանը:»:

Վերոգրյալի համատեքստում հարկ է արձանագրել, որ Գագիկ Այվազյանի մեկնաբանությունն առ այն, որ ցանկացած ժամանակահատվածում իր կողմից նշված խախտումները վերացնելուն ուղղված քայլերն ունենալու էին նույն հետևանքը, առնվազն խնդրահարույց է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քննչական կոմիտեում պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածում առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելը համարվում էր ձեռնարկատիրական գործունեության մաս, և ողջամտորեն կարելի է եզրակացնել, որ հաշվի առնելով վերաբերելի ժամանակահատվածում առևտրային կազմակերպության իրացման շրջանառության բացակայությունը՝ խախտումը կունենար նվազ նշանակություն կամ կկրեր ձևական բնույթ:

Ավելին, Գագիկ Այվազյանի կողմից 2017 թվականի պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրում բաժնեմասնակցությունը հայտարարագրելն առնվազն վկայում է այն մասին, որ վերջինս չէր կարող չհիշել նշված կազմակերպության գոյության մասին՝ ինչպես ինքն է պնդում:

Ուստի, Գագիկ Այվազյանը, զբաղեցնելով ինքնավար պաշտոն նախ՝ Քննչական կոմիտեում, ապա Դատախազությունում, գիտակցելով իր կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում թույլ տալու հանգամանքը՝ որևէ քայլ չի ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ: Ավելին, որոշակի գործողությունների կատարմանը ձեռնամուխ է եղել միայն այն փուլում, երբ ողջամտորեն կարծել է, որ նշված հանգամանքը կարող է բացասական ազդեցություն ունենալ իր բարեվարքության գնահատականի վրա:

Գագիկ Այվազյանի կողմից առևտրային կազմակերպության տնօրեն հանդիսանալու, պաշտոնավարման ամբողջ ընթացքում կառավարման գործառույթներ իրականացնելու հանգամանքները, կարծում եմ, ուղղակիորեն հանդիսանում են անհամատեղելիության պահանջի խախտում և չեն կարող դիտարկվել բացառապես շահույթ չստանալու և կազմակերպության գործունեության նկատմամբ անձի հնարավոր ազդեցության

տեսանկյունից: Վերջապես, բացարձակ չգործող կազմակերպության և անձի կողմից դրա հետագա գործունեության նկատմամբ որևէ նպատակ չունենալու պարագայում առնվազն տարօրինակ է տարիներ շարունակ Պետական եկամուտների կոմիտեում շրջանառության հարկ վճարող կամ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություններ ներկայացնելու փաստը, իսկ հետո էլ բաժնեմասնակցության դադարեցումը ոչ թե կազմակերպության գործունեության դադարեցման, այլ այն օտարելու միջոցով:

Անհամատեղելիության պահանջները «Հանրային ծառայության մասին» օրենքի համաձայն հանդիսանում են բարեվարքության համակարգի տարր, ուստի հարցը պետք է առավելապես գնահատվի դատախազի պաշտոն զբաղեցնող անձի բարեվարքության տեսանկյունից: Ավելին, Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհուրդն իր 2018 թվականի նոյեմբերի 23-ի «Դատախազների անկախությունը, հաշվետվողականությունը և էթիկան» վերտառությամբ թիվ 13 (2018) կարծիքում[3] ընդգծել է հետևյալը.

«Օրենքի գերակայության նկատմամբ հարգանքը պահանջում է ամենաբարձր էթիկական և մասնագիտական չափանիշները դատախազների, ինչպես նաև դատավորների վարքագծում, ինչպես աշխատանքային պարտականությունները կատարելիս, այնպես էլ դրանից դուրս, ինչն ապահովում է հասարակության կողմից արդարադատությանը վստահելը: (...) Ուստի, **դատախազները պետք է միշտ պահպանեն անձնական բարեվարքությունը և գործեն օրենքին համապատասխան՝** արդարացի, անաչառ և օբյեկտիվ՝ հարգելով և պաշտպանելով հիմնարար իրավունքներն ու ազատությունները, (...):»:

Վերը նշված իրավանորմերի համալիր վերլուծության, ինչպես նաև գործի քննության շրջանակներում ձեռքբերված տվյալների համադրությամբ գտնում եմ, որ Գագիկ Այվազյանի կողմից առևտրային կազմակերպությունում տնօրենի պաշտոն զբաղեցնելը չի կարող դիտվել որպես ձևական խախտում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս դատախազի պաշտոն զբաղեցնելուն զուգահեռ

[3] Strasbourg, 27 September 2012 (coe.int)

իրականացրել է Ընկերության կառավարման գործառույթներ, մասնավորապես, տրամադրել է լիազորագրեր, որոնց հիման վրա լիազորված անձը Պետական եկամուտների կոմիտեում շրջանառության հարկ վճարող կամ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություններ է ներկայացրել, ինչպես նաև հանդես գալով Ընկերության անունից՝ օտարել է Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը: Ավելին, հայտարարություններ ներկայացնելու առնչությամբ Գագիկ Այվազյանը տրամադրված պարզաբանումներով ընդունել է, որ հայտարարությունները ներկայացվել են միտումով, որ հնարավոր է տարվա ընթացքում Ընկերությունը գործունեություն իրականացնի, ինչն ինքնին հավաստում է, որ Ընկերության գործունեության դադարեցված լինելը միանշանակ չէ:

Վերոգրյալի համատեքստում կարծում եմ, որ Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Գագիկ Արմենակի Այվազյանի կողմից խախտվել են հանրային պաշտոնին օրենսդրությամբ ներկայացվող անհամատեղելիության պահանջները:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ